# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/110

ք. Երևան «27» 11 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Համիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ինտերէներգիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 32000000 (երեսուներկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա:

Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս պահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Ինտերէներգիա» ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական տուն 2 | Հասցեն՝ ք. Երևան, Դավիթաշեն 3-րդ թաղ., 12/70 |
| ՀՎՀՀ 02698732 | Հեռ.՝ (+374) 94-15-03-05 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Էլ. փոստ՝ ieinterenergia@gmail.com |
| Հ/Հ՝ 900011046852 | ՀՎՀՀ 01847856 |
| | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, |
| | Հ/Հ 220290123532000 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ------------------------------ Հ. Հակոբյան | ------------------------------ Հ. Եսայան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*

*«27» «11» 2025թ. կնքված*

*«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/110» ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ծառայության | | | | | Մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Անվանումը** | **Տեխնիկական բնութագիրը** | Չափման միավորը | Քանակը | Ընդամենը գինը, ՀՀ դրամ | Հասցեն | Ժամկետը* |
| 1 | **71241200/16** | **Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում** | «Երևանի զարդարվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի շենքի քանդման և նորի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերումը՝ ըստ Աղյուսակ N 1-ի (Նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ներկայացվող պահանջներ):<br>Մատուցման ենթակա (նախատեսվող) ծառայությունների համառոտ բնութագիրը՝<br>**Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետնյալ կազմով.**<br><u>ուսումնասիրել.</u><br>• շենքի տարածքը, կատարել համապատասխան չափագրման աշխատանքներ,<br>• արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (կոյուղու, սառը և տաք ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրամատակարարման, կապի, գազամատակարարման, ջեռուցման, հրդեհաշիջման և այլն) տեխնիկական վիճակը,<br>Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսել՝<br>• «Երևանի զարդարվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի գոյություն ունեցող շենքի քանդման աշխատանքներ<br>• «Երևանի զարդարվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի նոր շենքի կառուցում՝ 480 տեղ հզորությամբ: Անհրաժեշտ է նախատեսել ստորև ներկայացրած արհեստանոցները՝ համապատասխան որակավորմամբ և քանակով. | դրամ | 1 | 32000000 | ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ համաձայն Աղյուսակ 1-ում սահմանված ժամանակա-ցույցի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ✓ «Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտությամբ, արհեստավոր-մանրանկարիչ որակավորմամբ -3 արվեստանոց,<br>✓ «Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտությամբ, փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի որակավորմամբ -3 արվեստանոց,<br>✓ «Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտությամբ, փորագրող՝ մետաղյա գեղարվեստական իրերի որակավորմամբ -3 արվեստանոց,<br>✓ «Գեղարվեստական ձևավորման աշխատանքներ և դիզայն» մասնագիտությամբ, ձևավորող՝ ցուցափեղկերի որակավորմամբ - 3 արվեստանոց,<br>✓ «Գորգագործություն և ժանյակագործություն» մասնագիտությամբ, գոբելենագործի որակավորմամբ -3 արվեստանոց,<br>✓ «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտությամբ, վարսահարդարի որակավորմամբ -3 արվեստանոց,<br>✓ «Ավտոմոբիլային տրանսպորտի շահագործում և նորոգում» մասնագիտությամբ, փականագործ՝ ավտոմոբիլային տրանսպորտի նորոգման որակավորմամբ -3 արվեստանոց,<br>✓ «Ոսկերչություն» մասնագիտությամբ, ոսկերիչ որակավորմամբ -3 արվեստանոց<br>✓ «Բրուտագործություն» մասնագիտությամբ, պատրաստող՝ խեցեգործական գեղարվեստական իրերի որակավորմամբ -3 արվեստանոց<br>✓ «Դարբնություն», որի համար նույնպես անհրաժեշտ կլինի 3 մասնագիտական արվեստանոց:<br><br>Անհրաժեշտ է նախատեսել ստորև ներկայացված սենքերը.<br><br>✓ տնօրենի սենյակ – 50մ$^{2}$<br>✓ ընդունարան – 30մ$^{2}$<br>✓ տնօրենի տեղակալի սենյակ ուս. աշխ. գծով – 30մ$^{2}$<br>✓ տնօրենի տեղակալի սենյակ դաստ. գծով – 30մ$^{2}$<br>✓ տնօրենի տեղակալի սենյակ վարչ. գծով – 30մ$^{2}$<br>✓ ուսմասվարի սենյակ – ուսուցչանոց – 90մ$^{2}$<br>✓ զինղեկի սենյակ – 60մ$^{2}$<br>✓ հաշվապահի սենյակ – 40մ$^{2}$<br>✓ մանկավարժ – հոգեբանի սենյակ – 15մ$^{2}$<br>✓ բուժկետ – 20մ$^{2}$ | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ✓ կարիերայի ուղղորդման պատասխանատուի սենյակ – 15մ$^2$<br>✓ համակարգչային օպերատորի սենյակ – 15մ$^2$<br>✓ գրադարան – 100մ$^2$<br>✓ պահեստ – 3 հատ յուր. 60մ$^2$<br>✓ հավաքարարների սենյակ – 15մ$^2$<br>✓ պահակակետ– 10մ$^2$<br>✓ բանվորների սենյակ- 30մ$^2$<br>✓ մասնագիտական գործիքների և նյութերի սենյակներ – 7 հատ յուր. 20մ$^2$<br>✓ նկարչության սենյակ – 7 հատ յուր. 80մ$^2$<br>✓ հանրակրթական սենյակներ – 22 հատ, հետևյալ ուղղվածությամբ՝<br>1. «Հայոց լեզու և գրականություն» - 3 հատ,<br>2. «Հանրահաշիվ և երկրաչափություն» - 3 հատ<br>3. «Ռուսաց լեզու» - 2 հատ<br>4. «Անգլերեն» - 2 հատ<br>5. «Ֆիզիկա» - 2 հատ<br>6. «Քիմիա» - 1 հատ<br>7. «Աշխարհագրություն» - 1 հատ<br>8. «Կենսաբանություն» - 1 հատ<br>9. «Պատմություն» - 3 հատ<br>10. «Հասարակագիտություն» - 2 հատ<br>11. «Ինֆորմատիկա» - 1 հատ<br>12. «ՆԶՊ» - 1 հատ<br>✓ արխիվային սենյակ – 3 հատ յուր. 80մ$^2$<br>✓ հանդիսությունների դահլիճ – 500 հոգու համար նախատեսված<br>✓ ֆիզիկական պատրաստվածության դահլիճ:<br>• տարածքի գեոդեզիական հանութագրում, հատակագծերի և բնորոշող կտրվածքների կազմում՝ մշակում: Գոյություն ունեցող ինժեներական ցանցերի, ոչ համայնքային պատկանելության տարածքների ու կառույցների նշում: Հանույթը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ: Ամրագրել և ներկայացնել հենանիշերի (репер) ցուցակ,<br>• արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (կոյուղու, սառը և տաք ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրամատակարարման, կապի, գազամատակարարման, ջեռուցման, հրդեհաշիջման և այլն) եզրակացությունների | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ձեռքբերում և հատակագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում,<br>• ներքին և արտաքին ինժեներական ենթակառուցվածքների՝ հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, սառը և տաք ջրամատակարարման և ջրահեռացման, կոյուղու, ջեռուցման, էլեկտրամատակարարման, օդափոխության և օդորակման, կապի, սառնամատակարարման և այլ անհրաժեշտ համակարգերի կառուցում, էներգաարդյունավետության, էներգախնայողության, քաղաքացիական պաշտպանությանն ուղղված միջոցառումներ,<br>• հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներ և սարք-սարքավորումներ (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ՝ համապատասխան ինվենտարով, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, համապատասխան հիմնավորմամբ վերելակ կամ վերհան սարք),<br>• տեսահսկման, անվտանգության բոլոր տեսակի համակարգերը՝ շենքի ներսում և շենքի տարածքում,<br>• ըստ անհրաժեշտության (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն) արտաքին հաղորդակցուղիների կառուցում, քանդում կամ վերակառուցում և այլն, էներգետիկ նշանակության շինություններ (բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ) ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով,<br>• այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար,<br>• պահանջվող բոլոր սարք սարքավորումների, գույքի վերաբերյալ մասնագրերում ներառել մանրամասն տեխնիկական բնութագրերը,<br>• շենքի արտաքին լուսավորություն<br>• ներքին և արտաքին արդիական հարդարում՝ ժամանակակից լուծումներով և մոտեցումներով: Ընդ որում ամեն ստորաբաժանման համար նախատեսել թեմատիկ լուծումով ինտերիեր, | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | • այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար,<br>• տարածքի բարեկարգում, ասֆալտապատում, կանաչապատում և ոռոգման ցանցի/համակարգի կառուցում (ըստ անհրաժեշտության), անձրևաջրերի հեռացման համակարգի/ցանցի կառուցում, արտաքին լուսավորություն, ըստ անհրաժեշտության (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն) արտաքին հաղորդակցուղիների կառուցում, քանդում կամ վերակառուցում և այլն, էներգետիկ նշանակության շինությունների (բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ) նախատեսում և տեխնիկական պայմանների ձեռք բերում՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով,<br>• արտաքին և ներքին լուսավորության էներգախնայող լուսատուներ,<br>• շենքի կենտրոնացված օդափոխության համակարգ,<br>• շենքի տարհանման պլան,<br>• ողջ տարածքում ներքին համակարգչային ցանց և համապատասխան կապի և թույլ հոսանքների մալուխային համակարգ՝ միացված գլխավոր մալուխային համակարգին, ինչպես նաև սերվերին (դրանք թողնելով հատակի և պատերի մեջ),<br>• պահանջվող բոլոր սարք սարքավորումների, գույքի վերաբերյալ մասնագրերում մանրամասն տեխնիկական բնութագրեր,<br>• նախագծման ընթացիկ աշխատանքները աշխատանքային կարգով համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ: Ծագած բոլոր հարցերը քննարկել Պատվիրատուի հետ:<br>• Լրացուցիչ նախագծային լուծումներ և փոփոխություններ՝ Պատվիրատուի հետ համաձայնվեցնելով:<br><br>** Նախագծի վերաբերյալ այլ մանրամասները և պահանջները կներկայացվեն Պատվիրատուի կողմից նախագծի էսքիզային տարբերակի քննարկման ժամանակ:*<br>*Ներկայացված սենքերի մակերեսները անհրաժեշտ է նախատեսել պահպանելով քաղաքաշինական նորմերի պահանջները,* | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | *անհրաժեշտության դեպքում փոփոխել՝ նախատես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Ներկայացված սենքերի քանակի և կազմի փոփոխությունն իրականացնել նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ՝ էսքիզային նախագծի քննարկման ժամանակ:* | | | | | |

ԱՂՅՈՒՍԱԿ 1՝ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

| | |
|---|---|
| Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ | **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝**<br>- Ճարտարապետահատակագծային առաջադրանք (կտրամադրվի Պատվիրատուի կողմից էսքիզային նախագծի ընդունելուց և հաստատելուց հետո) և տեխնիկական պայմաններ (կտրամադրվի Պատվիրատուի կողմից՝ նախագծող կազմակերպության կողմից կոմունիկացիաների համար անհրաժեշտ ծախսի հաշվարկների և այլ մանրամասներ ստանալուց հետո),<br>- շենքերի և շինությունների, զբաղեցրած և օգտագործման համար հատկացված հողամասի սեփականության վկայական (կտրամադրվի Պատվիրատուի կողմից),<br>- ինժեներաերկրաբանական հետազոտություն (կտրամադրվի Պատվիրատուի կողմից)<br>- շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության աստիճանի վերաբերյալ եզրակացություն՝ համապատասխան լիցենզավորված կազմակերպության կողմից (կտրամադրվի Պատվիրատուի կողմից),<br>- կատարված բոլոր անհրաժեշտ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ տրված եզրակացություններ (նախագծող կազմակերպության կողմից),<br>- նախագծային առաջադրանք և այլ մանրամասներ (կկազմվի ընտրված Նախագծող կազմակերպության և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),<br>- չափագրություններ (նախագծող կազմակերպության կողմից),<br>- ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ, եթե այդպիսիք անհրաժեշտ են (նախագծող կազմակերպության կողմից),<br>- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) եզրակացության ձեռքբերում ըստ անհրաժեշտության (նախագծող կազմակերպության կողմից),<br>- Տարածքի գեոդեզիական հանույթի իրականացում (նախագծող կազմակերպության կողմից)<br>- Վերելակներ և կաթսայատներ նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություններ (նախագծող կազմակերպության կողմից), |

- այլ անհրաժեշտ փաստաթղթեր (Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ, Պատվիրատուի առաջադրանքով):

**Նախագծի մշակում ըստ ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջների՝**

- ՀՀ ազգային ժողովի կողմից 05.05.1998թ. ընդունված ՀՕ-217 օրենքը Քաղաքաշինության մասին,
- 03.05.2023թ. ընդունված ՀՕ-150-Ն ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»,
- ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշում «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»,
- «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների հաստատման մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. N 128-Ն հրաման:
- ՀՀ կառավարության 16.02.2006թ. N 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 78-Ն հրաման՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին,
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.02.2024 թվականի ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ. նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2005 թվականի մայիսի 2-ի N 75-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 22.05.2023 թվականի «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 04-Ն հրաման,
- ՀՀՇՆ 31-03-«Հասարակական շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ. N 95-Ն հրաման,
- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թ. N 253-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 83-Ն հրաման,

| | |
|---|---|
| | - ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի 120-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերը հաստատելու, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին N 56-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 40-01.02 «Ջրամատակարարում. արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ. N 103-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 80-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 52-01-2021 - «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.01.2021թ. N 02-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 53-01-«Պողպատե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ. N 104-Ն հրաման<br>- ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N 102-Ն հրաման<br>- ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում<br>- ՀՀ կառավարության 25.12.2014թ. N 1504-Ն որոշում «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»: |
| Նախագծման փուլերը | **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝**<br>ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. N128-Ն հրամանի համաձայն:<br>Նախագծային աշխատանքների իրականացում 2 (երկու)՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով՝ նախապես ներկայացնելով էսքիզային նախագիծ:<br>**Էսքիզային նախագիծը կազմում է ընդհանուր ծառայության առնվազն 10 տոկոսը:**<br>**«Նախագիծ» փուլը կազմում է ընդհանուր ծառայության առնվազն 30 տոկոսը:** |

| | |
|---|---|
| Նախագծի կազմը | **ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**<br>**Նախագծի բոլոր բաժինները մշակել՝**<br>հաշվի առնելով առաջադրանքի բնույթը, շինարարական նորմերով և կանոններով սահմանված կարգերը:<br><u>Նախագծի լրակազմը առնվազն պետք է ընդգրկի (մշակված լինեն) ներքոնշյալ փաստաթղթեր.</u><br>- **Ելակետային տվյալների փաթեթ***<br>- **Ընդհանուր բացատրագիր /կարող է համատեղվել ելակետային նյութերում/***<br>- **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ*** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ), բարեկարգման նախագիծ<br>- **Ճարտարապետաշինարարական և դիզայներական մաս***<br>- Ծավալահատակագծային լուծումներ, հատակների և առաստաղների արտացոլված հատակագծեր*<br>- Կտրվածքներ և ճակատներ*<br>- Եռաչափ մոդելավորում և ներկայացում Archicad, Autodesk Revit կամ այլ ծրագրային ֆորմատով (համաձայնեցնելով Պատվիրատուի հետ)*<br>- Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ*<br>- Մասնագրեր և մանրամասն հանգույցներ<br>- Շինարարության կազմակերպման նախագիծ /փուլային իրականացմամբ/<br>- Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծի կազմում<br>- **Կոնստրուկտիվ մաս**<br>- Շենքի սխեմաներ և հանգույցներ՝ անհրաժեշտ հիմնավորումով<br>- Կոնստրուկտիվ լուծումներ, հատվածքների կտրվածքի չափեր, ամրանավորում և այլն,<br>- Կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>- **Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր, նախագիծ)<br>- Էլեկտրամատակարարման՝ ներառյալ հողանցման համակարգ, լուսավորություն /հնսոլիացիոն հաշվարկով հիմնավորված/, կոյուղու, ջրամատակարարման և ջրահեռացման, օդափոխության և օդորակման, սառնամատակարարման, կապի ցանցերի, տեսահսկման, անվտանգություն, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման և այլն համակարգերի սխեմաներ, հատակածագծեր, կտրվածքներ:<br>- Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:<br>- Հրդեհի բռնկման ժամանակ մարդկանց և արժեքավոր սարքավորումների տարահանման ուրվագծեր:<br>- Հակահրդեհային պաշտպանության տեխնիկական համակարգի ուրվագիծ:<br>- Համակարգերի սկզբունքային ուրվագծեր:<br>- Սարքավորումների, ռադիոէլեկտրոնային և այլ տեխնիկական միջոցների տեղադրման սկզբունքային ուրվագծեր:<br>- Ցանցերի հատակագծեր: |

| | |
|---|---|
| | - Այլ ներքին և արտաքին լուծումներ, գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր, միացման հանգույցների նկարագիր, տեխնիկական բնութագրեր և այլն:<br>- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն,<br>- Ծավալաթերթ-նախահաշվի կազմում /երկլեզու՝ հայերեն-ռուսերեն տարբերակներն առանձնացված/<br>- Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ)<br>- Նախագծով նախատեսված նյութերի և սարքավորումների երաշիքային ժամկետների ցանկ<br>- Ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկ:<br>- Օրացուցային գրաֆիկում ներկայացվող աշխատանքների ցանկը կազմել ծավալաթերթ-նախահաշվում ներկայացված բաժիններին համապատասխան:<br><br>Էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, պրեզենտացիայի կազմակերպում, անհրաժեշտության դեպքում նաև, Պատվիրատուի պահանջով փոփոխում: Աստղանիշով (*) նշված տողերը համարվում են էսքիզային նախագծի մաս և ենթակա են համաձայնեցման առաջին փուլում: Նախագծի նախնական համաձայնեցում, Պատվիրատուի պահանջով փոփոխում:<br><br><u>Համաձայնեցնող մարմիններ</u><br><u>*Նախագծի համաձայնեցում*</u><br>- Երևանի քաղաքապետարան (ըստ անհրաժեշտության),<br>- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,<br>- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին,<br>- Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ,<br>- Այլ մարմիններ ըստ անհրաժեշտության,<br><br>*Համաձայնեցումների համար դիմում է, պատասխանները ստանում և ներկայացնում է Կատարողը:* |
| Այլ պահանջներ | <u>Եզրակացություններ</u><br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում՝<br>- Նախագծում կաթսայատներ նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում,<br>- Նախագծում վերելակներ կամ վերհան սարքեր նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում,<br>- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) եզրակացության ձեռքբերում (դրա անհրաժեշտության դեպքում): |

**Փորձաքննություններ**

- Պարզ փորձաքննության ձեռքբերում՝ Պատվիրատուի կողմից: Ընդ որում ծառայությունների դիմաց կատարողը վճարվում է պարզ փորձաքննությունը անցնելուց հետո:
- Պետական համալիր փորձաքննության ապահովում՝ Պատվիրատուի կողմից:

**Նախագծի լրամշակում**

- Պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական պարզ փորձաքննության արդյունքներով եթե տրվել է եզրակացություն հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, նախագծող կազմակերպության կողմից:
- Պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող համալիր փորձաքննության գործընթացի արդյունքներով, եթե տրվում է բացասական եզրակացություն կամ դրական եզրակացություն՝ պայմանով, որ անհրաժեշտ է կատարել որոշակի լրամշակում, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, նախագծող կազմակերպության կողմից:

**Շինարարական նյութերի, պատրաստվածքների, սարքերի, սարքավորումների (շահագործման) նկատմամբ պահանջներ.**

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ,
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,
- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ:
- նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների, սարքերի, սարքավորումների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական և/կամ անձնագրային տեխնիկական ցուցանիշները:
- օգտագործվող ապրանքների նկարագրության ժամանակ հղումներ օգտագործելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև որպես համարժեք առաջարկվող առնվազն երեք ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը՝ միաժամանակ: Համարժեք առաջարկվող ապրանքներից առաջ անհրաժեշտ է գրել «կամ համարժեք» արտահայտությունը:
- օդափոխության և պոմպային սարքավորումներ նախատեսելու դեպքում՝ թույլատրելի շեղումների մասին տեղեկատվություն:
- օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:
- օգտագործվող նյութերը, պատրաստվածքները, սարքերը, սարքավորումները սահմանելիս նախապատվությունը տալ տեղական արտադրության և ՀՀ ներմուծվող շինանյութերին, սարքերին, սարքավորումներին,
- շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիաների / ներդիրների ցանկը:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

- Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ **երկլեզու** /առանձին հայերեն 6 օրինակ և ռուսերեն՝ 2 օրինակ/:
- Նախահաշվի և ծավալաթերթի /միավոր արժեքներով/ փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներկայացում՝ հայերեն 3 և ռուսերեն 1 օրինակ:
- Նախագծահաշվային երկլեզու փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ներկայացում՝ **6 օրինակ էլեկտրոնային կրիչով**, տեքստային և գծագրական նյութերը՝ AutoCAD և PDF ֆորմատներով, նախահաշիվը և ծավալաթերթը՝ EXCEL տարբերակներով:
- Նախնական էսքիզային նախագիծը անհրաժեշտ է ներկայացնել 2 օրինակով՝ հայերեն լեզվով, ինչպես նաև ներկայացնել դրա էլեկտրոնային տարբերակը:

**Էլեկտրոնային կրիչում ներառվող ֆայլերը պետք է ունենան պարունակությանը համարժեք անվանումներ և զերծ լինեն կողմնակի ինֆորմացիայից:**

Նախագծի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել սահմանված կարգով արտոնագրված՝ ճարտարապետ /բարձրագույն դասի Ա ենթադասի/, ճարտարագետ-կոնստրուկտոր / առաջին դասի Ա1 ենթադասի/, էլեկտրաէներգետիկ ճարտարագետ նախագծող /1-ին կարգի/, ջերմագազա-մատակարարման և օդափոխության ճարտարագետ նախագծող /1-ին կարգի/, ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ նախագծող /1-ին կարգի/, կապի համակարգերի ճարտարագետ նախագծող /1-ին կարգի/

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել հետևյալ ձևով. Կողմերի միջև կնքվող Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 124 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել նախնական էսքիզային նախագիծը համաձայնեցման համար: Մնացած ծառայությունների մատուցումը սկսել էսքիզային նախագիծը Պատվիրատուի կողմից հաստատելուց հետո և իրականացնել.

- «Նախագիծ» փուլը 135 օրացուցային օրվա ընթացքում՝ ներառյալ հետազոտական աշխատանքները,
- «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը 165 օրացուցային օրվա ընթացքում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ------------------------------- Հ. Հակոբյան | ------------------------------- Հ. Եսայան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 2*

*«27» «11» 2025թ. կնքված*

*«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/110» ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ. ՀՀ պետական բյուջեից, ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/16 | **Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում** (Երևանի զարդարվեստի արհեստագործական պետական ուսումնարանի շենքի քանդման և նորի կառուցման) | - | - | - | - | - | - | - | - | - | - | 32000000 | 32000000 | 32000000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

------------------------------ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

------------------------------ Հ. Եսայան

(ստորագրություն)

Կ.Տ